ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ, *Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները 1918-1921 թթ., Ե., ԵՊՀ հրատ., 2016, էջ 830:*



Վ. Վիրաբյանի գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկուն ու բազմերանգ է: Գիտնականն անդադար որոնումների, ճշտումների և համադրումների մեջ է: Այս աշխատությունը ևս այդ անդուլ և հետևողական պրպտումների արդյունքն է: Թեման, որ դարձել է գիտական հետազոտության նյութ, արդիական և չափազանց կարևոր է, քանի որ աշխարհաքաղաքական նոր վերաձևումների պարագայում հայ-վրացական հարաբերությունների սահմանները ճշգրտելու ու հստակեցնելու անհրաժեշտություն է նկատվում: Մեր համոզմամբ՝ ծավալուն այս աշխատությունն արժանի է իր վրա բևեռելու պատմագիտական հանրույթի, հումանիտար գիտությունների մասնագետների ուշադրությունը:

Հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող Վանիկ Վիրաբյանը, հենվելով բազմաբնույթ արխիվային նյութերի, տարբեր վավերագրերի վրա, հանգամանալից հետազոտել է հիմնախնդիրների մի ողջ փունջ, որոնք վերաբերում են հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններին, Հայաստանի և Վրաստանի Հանրապետությունների միջև գոյություն ունեցող հակասություններին, որոնք գլխավորապես առնչվում էին սահմանային-տարածքային վեճերին: Քննախույզ մոտեցում է ցուցաբերվել 1918 թ. վրաց-հայկական պատերազմի սանձազերծման դրդապատճառներին, ձեռք բերված ռազմաքաղաքական արդյունքներին, սահմանազատման շուրջ ստեղծված իրավիճակին, 1921 թ. սկզբի Լոռու հայ գյուղացիության ապստամբությանը:

Վ. Վիրաբյանի կողմից ընթերցողի դատին ներկայացված մենագրությունը արժեքավոր է: Նրանում համակողմանիորեն քննարկվել են խիստ արդիական հայ-վրացական ռազմաքաղաքական բազմաշերտ հարաբերությունների կնճռոտ հիմնախնդիրները 1918-1921 թվականներին: Լուսաբանվել են վրաց-հայկական պատերազմին հաջորդող ժամանակահատվածում անգլիացիների ակտիվ մասնակցությամբ և ճնշմամբ 1919 թ. կնքված հունվարյան համաձայնագրին վերաբերող հիմնախնդիրները: Ընդ որում, դրանք հանգամանալից պատմաքննական վերլուծության են ենթարկվել Լոռու չեզոք գոտու շուրջ մղված հակամարտության տեսակետից, որոնք դեռ լիարժեք հետազոտված չեն, և որոնց խորքային հետազոտման պակասը միշտ էլ զգացվել է:

Հեղինակը քննության կենտրոն է բերել ու հերքել թյուրիմացաբար գիտական շրջանառության մեջ դրված պատմակեղծարարների՝ մասնավորապես Գ. Էգգեյի և Է. Անդերսենի, ինչպես նաև վրաց հայտնի պատմանենգիչ Գ. Մարխուլիայի տեսակետները՝ Լոռու, Ախալքալաքի և Արդահանի գավառների նկատմամբ վրացական նկրտումների վերաբերյալ: Մենագրությունում վերհանվել են հայ-վրացական

ռազմաքաղաքական հարաբերություններին սերտորեն առնչվող մի շարք կարևոր հարցեր. մասնավորապես պատմաքննական վերլուծության են ենթարկվել ինչպես Հայաստանի առաջին, այնպես էլ երկրորդ՝ խորհրդային հանրապետությունների գործադրած համառ ջանքերը մայր հայրենիքի հետ Լոռվա չեզոք գոտու վերամիավորման համար: Ընդսմին՝ Վ. Վիրաբյանը իրավացիորեն նկատում է, որ Վրաստանի մենշևիկյան հանրապետության հետ Լոռու չեզոք գոտու համար հակամարտության առանցքային հիմնախնդիրներն այսօր խիստ արդիական են և լիովին համահունչ ներկայումս ընթացող պետաքաղաքական ու ազգային պետականության վերստեղծման պայմաններում ընթացող գործընթացներին:

Վ. Վիրաբյանն արդարացիորեն նշում է, որ թե՛ Հայաստանի Հանրապետությունը և թե՛ մենշևիկյան Վրաստանը Լոռու համար բախման վերջնագծում հայտնվեցին ռազմաքաղաքական փակուղում, որին հաջորդեց անխուսափելի խորհրդայնացումը:

Հեղինակը եզրահանգում է, որ հենց այս իրավիճակում էլ «Չեզոք գոտու» և առհասարակ հայկական Լոռու շուրջ հայ-վրացական ռազմաքաղաքական լարվածությունը սրեց երկու հանրապետությունների փոխհարաբերությունները բոլոր բնագավառներում՝ ռազմական, տնտեսական, քարոզչական-քաղաքական: Նրանք իրենց վրա էին բևեռել Թուրքիայի, Ադրբեջանի, Անտանտի երկրների և այլ ուժերի ուշադրությունը: Վ. Վիրաբյանը, վկայակոչելով մի շարք արժանահիշատակ փաստեր, այն հետևությանն է եկել, որ Վրաստանի մենշևիկյան կառավարությունը 1918-1921 թթ. ընթացքում ամեն առիթ օգտագործում էր Լոռու չեզոք գոտում, Ախալքալաք-Արդահանում և այլուր ամրապնդվելու համար:

Մենագրության մեջ կարևորված են նաև հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններում առկա լարվածությունը լիցքաթափելու նպատակով ՀՀ կառավարության ռազմավարական ջանքերը և այդ ուղղությամբ առաջարկված փոխզիջումային առաջարկները, դրանց հնարավոր հետևանքները:

Վ. Վիրաբյանն այլ հարցադրումների հետ նաև կարևոր է համարում ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության խաղաղ խորհրդայնացումից հետո մենշևիկյան Վրաստանը այդուհանդերձ շարունակեց Չեզոք գոտու բռնազավթման իր տիրահոչակ քաղաքականությունը: Սակայն հանդիպեց Խորհրդային Հայաստանի կոշտ և անզիջում կեցվածքին այս խնդրում, որի խորքային արմատները բնականաբար պետք է որոնել բոլշևիկյան Ռուսաստանի կողմից իրականացվող անդրկովկասյան ռազմավարության խորքային ծալքերում: Այստեղ անժխտելի է այն հանգամանքը, որ սահմանային-տարածքային սահմանավեճերի հետ անխզելիորեն շաղկապված հայ-վրացական բախումնային իրավիճակը Մոսկվան օգտագործեց Վրաստանի խորհրդայնացման խնդիրը լուծելու համար: Ըստ այդմ էլ Վ. Վիրաբյանն անվարան եզրակացնում է, որ Վրաստանի հետ ռազմական բախումն ուղղակիորեն օգտագործվեց ոչ միայն Լոռու խնդիրը լուծելու և այդ հայրենի տարածքի մի թանկարժեք կտորը մայր հայրենիքի հետ վերամիավորելու համար, այլև բոլշևիկյան Ռուսաստանի տարածաշրջանում ամրապնդվելու տեսանկյունից: Ըստ հեղինակի եզրահանգման՝ բոլշևիկյան զգեստավորումն ուղղակի դարձավ Մոսկվայի քաղաքականության անկյունաքարը: Հեղինակը միաժամանակ գտնում է, որ պետք է հեռու մնալ խորհրդային իշխանությունների ռազմավարության իդեալականացումից և գերա-

գնահատումից, որոնք Կարս-Արդահանի խնդրում 1921 թ. գնացին քաղաքական գործարքի քեմալական Թուրքիայի հետ:

Եվ այսպիսով, կարծում ենք, որ պատմական Վ. Վիրաբյանի տքնաջան աշխատանքի արգասիքը հանդիսացող արժեքավոր և մեծածավալ այս աշխատությունը հեղինակի մյուս մենագրությունների և գրքերի նման իր արժանի տեղը կգտնի մասնագետ պատմաբանների և առհասարակ ընթերցող հասարակության պատմաճանաչողական հետաքրքրությունների գինանոցում: Կարծում ենք՝ այս արժեքավոր աշխատությունը թարմ խոսք է պատմագիտության մեջ:

Այդուհանդերձ, ցանկանում ենք արտահայտել նաև մի շարք նկատառումներ, որոնք ավելի կարժնորեին մենագրությունը:

Ցանկալի կլիներ, եթե հեղինակը նույնքան մեծ ուշադրություն դարձներ Արդահան-Արդվին սահմանավեճին, որքան Լոռի-Ախալքալաքին:

Չնայած աղբյուրների սղությանը և շատ դեպքերում անհասանելիությանը՝ կարելի էր ավելի հանգամանալից անդրադառնալ վրացական խորհրդարանի դիրքորոշմանը հայ-վրացական պատերազմի հարցում:

Կարելի էր քննության ենթարկել 1918 թ. հայ-վրացական պատերազմի ժամանակ գերված զինվորների ու սպաների հարցը, ցույց տալ վրա-ցական կողմի անմարդկային վերաբերմունքը:

Մենագրությունը կշահեր, եթե ավելի մանրամասն քննության առնվեին Դենիկինի ունեցած դերը և բրիտանացիների միջամտության խորքային պատճառները հայ-վրացական ռազմաքաղաքական առճակատման ընթացքում: Անհրաժեշտ էր ավելի ամբողջական հետազոտել այն հարցը, թե ինչու խորհրդային իշխանությունները Լոռու մեծ մասը վերադարձրին Հայաստանին, իսկ Ախալքալաքը տրվեց Վրաստանին:

Իհարկե, վերոնշյալ դիտարկումները նպատակ ունեն ուղղորդելու հեղինակին հետագա աշխատանքներում անդրադառնալու նաև այդ խնդիրներին և բնավ չեն նսեմացնում հսկայածավալ ուսումնասիրության արժեքը: Վ. Վիրաբյանի մենագրությունն ունի արդիական հնչեղություն և ուսանելի է այսօրվա պատմաքաղաքական գործընթացների, միջպետական հարաբերությունների կարգավորման նոր ռազմավարության մշակման համար: Սա առաջին մեծածավալ աշխատությունն է 1918-1921 թթ. հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների առավել ամբողջական և նորովի հետազոտման բնագավառում:

Ամփոփելով վերն ասվածը՝ կարծում ենք, որ Վ. Վիրաբյանի այս ուշագրավ, կուռ շարադրված և գիտատեսական բարձր մակարդակ ունեցող, հայոց պատմության սակավ ուսումնասիրված էջերից մեկին նվիրված մենագրությունը կարող է զգալի հետաքրքրություն ներկայացնել պատմաբանների և առհասարակ գիտական հասարակության, դասախոսների և ուսանողության համար:

Վ. Վիրաբյանի՝ վրաց-հայկական ռազմաքաղաքական հարաբերություններին նվիրված այս հիմնարար աշխատությունը արժեքավոր ներդրում է հայ պատմագիտության և մասնավորապես հայկական առաջին հանրապետության պատմության հետազոտման, սպիտակ էջերի լուսաբանման մեջ:

ՊՈՂՈՍՅԱՆ Ս. Ա.
Պատմական գիտությունների դոկտոր